ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մարտի 2021թ. № 133

ԱՐՄԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրետա Աջամյանի մահից հետո Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող անշարժ գույքը ըստ կտակի ժառանգության իրավունքի 2021 թվականի մարտի 3-ի վկայագրի փոխանցվել է Արման Ավետիսյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Արման Սերգոյի Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արման Սերգոյի Ավետիսյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 0,087 հա մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 89,10 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 50,1 քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինությանը, 42,0 քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինությանը և 70,0 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին տրամադրել «քաղաք Սպիտակ, Պանրագործների թաղամաս, թիվ 250» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մարտի 2021թ. № 134

ԱՐՄԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրետա Աջամյանի մահից հետո Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասում գտնվող անշարժ գույքը ըստ կտակի ժառանգության իրավունքի 2021 թվականի մարտի 3-ի վկայագրի փոխանցվել է Արման Ավետիսյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Արման Սերգոյի Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արման Սերգոյի Ավետիսյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասում գտնվող 0,3815 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 300» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մարտի 2021 թվականի N 135

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԼՐԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական դասակարգման և «Օրենսդիր և գործադիր մարմիններ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման կատարման ծախսեր» գործառնական դասակարգման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածից կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի իգական սեռի աշխատակիցներին վճարել լրավճար՝ համաձայն հավելվածի:

2.Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
«04» մարտի 2021թ. թիվ 135 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԼՐԱՎՃԱՐ ՍՏԱՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած աշտոնը	Լրավճարը ՀՀ դրամ
1	Գյուլազյան Անահիտ	Աշխատակազմի քարտուղար	10 000
2	Մաթոսյան Արսինե	Համայնքի ղեկավարի օգնական	10 000
3	Օհանյան Աիդա	Համայնքի ղեկավարի օգնական-հասարակայնության հետ կապերի պատասխանատու	10 000
4	Թումանյան Արմինե	Քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ	10 000
5	Սարդարյան Ռուզաննա	Քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ	10 000
6	Մնոյան Հասմիկ	Քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ	10 000
7	Դարչինյան Վերգինե	Քարտուղարության բաժնի առաջատար մասնագետի ժ/պ	10 000
8	Օհանյան Լուսինե	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ	10 000
9	Թումանյան Անի	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ	10 000
10	Խաչատրյան Սուսաննա	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ	10 000
11	Գասպարյան Լիաննա	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ	10 000
12	Շիրոյան Անուշ	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ	10 000
13	Լամբարյան Կարինե	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի 1-ին կարգի մասնագետ-գանձապահ	10 000
14	Համբարյան Լուսինե	Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ	10 000
15	Թումանյան Գայանե	Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ	10 000
16	Խաչատրյան Վեներա	Աշխատակազմի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	10 000
17	Արշակյան Արմինե	Աշխատակազմի առաջատար մասնագետ	10 000
18	Մագոյան Մելինե	Աշխատակազմի առաջատար մասնագետի ժ/պ	10 000
19	Ասատրյան Վանուհի	ՔԿԱԳ բաժնի պետ	10 000
20	Դանիելյան Նյուրա	ՔԿԱԳ բաժնի 1-ին կարգի մասնագետ	10 000
21	Մաթոսյան Հայկուհի	Գործավար	10 000
22	Կիրակոսյան Սեդա	Հավաքարար	10 000
23	Մելիքյան Գոհար	Հավաքարար	10 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» մարտի 2021թ. № 136

ՄՆԱՑԱԿԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ԹՈՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2797259 վկայականը և Մնացական Ժորայի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մնացական Ժորայի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Թորոսյան փողոց, թիվ 13» հասցեում գտնվող 06-006-495-002-001 կադաստրային ծածկագրով 623,1 քառակուսի մետր մակերեսով բանկի գործառնական նշանակությունը փոխել գրասենյակ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի գործառնական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Արման Ավետիսյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 5
ք.Սպիտակ